ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Հրաման

161/1-Լ 25 օգոստոս, 2026

Ընդունող մարմին **Ռեկտոր**

Կարգավիճակ **Գործում է**

ԱՇԽԱՏՈՂԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 207.1-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝

1. Սահմանել, որ.

1) ԵՊՀ աշխատողին տրամադրվում է ծնողական ժամ՝ երեխայի խնամքի, դաստիարակության, կրթական գործընթացներին մասնակցության կամ երեխայի շահերից բխող այլ պարտականությունների իրականացման նպատակով: Աշխատող ծնողը (խնամատար ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը) իրավունք ունի օգտվելու ծնողական ժամից՝ բացակայելով աշխատանքի վայրից:

2) Ծնողական ժամը տրամադրվում է՝

ա. մինչև տասներկու տարեկան մինչև երկու երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 30 րոպե.

բ. մինչև տասներկու տարեկան երեք և ավելի երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը մեկ ժամ.

գ. մինչև 18 տարեկան՝ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումով երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը մեկ ժամ (անկախ երեխաների թվից):

3) Աշխատողին ծնողական ժամը տրամադրվում է e-request.ysu.am էլեկտրոնային հարթակի միջոցով ԵՊՀ ռեկտորի անունով ներկայացված գրավոր դիմումի հիման վրա՝ նշելով ծնողական ժամի ժամանակահատվածը։

4) Ծնողական ժամը ներառվում է աշխատաժամանակում, և այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի հիմնական աշխատավարձը։

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին։

Սույն փաստաթուղթը բեռնվել է ԵՊՀ փաստաթղթերի պաշտոնական հրապարակման կայքից
https://www.ysu.am/documents-categories

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am